ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Կազմեց՝	Ռազմիկ Օհանյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ
Կազմման հիմքը՝	ՀՀ կառավարության 02.08.2018 թ. № 878-Ն որոշման հավելվածի 15-րդ կետ
Պայմանագիր՝	№ 33 առ 29.09.2022 թ. և № 29 առ 02.10.2023 թ.
Կազմման ամսաթիվը և վայրը՝	11.01.2024թ., ք. Երևան
Հաշվետու ժամանակաշրջան՝	2023 թ. 2-ին կիսամյակ

Համաձայն վերոնշյալ պայմանագրերի պահանջների, իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Համապատասխան հանձնարարականների համաձայն հավաքագրել եմ կատարված աուդիտորական առաջադրանքների հաշվետվությունները, դրանք էլեկտրոնային ձևաչափով փոխանցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության (նախարարության) ներքին աուդիտի կոմիտեի անդամներին, նրանց կողմից հաշվետվությունների հետ կապված հարցերի վերաբերյալ տվել եմ ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:
2. Ըստ անհրաժեշտության, հաստատված աուդիտորական առաջադրանքների շրջանակներում կազմակերպել եմ աուդիտորական խմբի անդամների և նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ աուդիտորական առաջադրանքի հետ կապված քննարկումներ, մասնակացել այդ քննարկումներին:
3. Կազմակերպել և մասնակցել եմ աուդիտի ենթարկված միավորների պատասխանատուների հետ ներքին աուդիտի հաշվետվությամբ արձանագրված դիտարկումների վերաբերյալ քննարկումներին, անհրաժեշտության դեպքում կատարելով եմ մասնագիտական խնդիրների բացահայտումներ, այդ խնդիրների վերաբերյալ առաջարկել եմ մասնագիտական լուծումներ, ինչպես նաև ապահովել եմ այդ քննարկումների հետ կապված գրագրությունը և ստացված պատասխանների տրամադրումը նախարարության համապատասխան ստորաբաժանումներին:
4. Աջակցել եմ նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ին՝ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերի նախապատրաստման, անցկացման, արձանագրման, դրանց հետ կապված փաստաթղթերի շրջանառման հարցերում, փաստաթղթավորելով դրանք:
5. Հրավիրված անձի կարգավիճակով մասնակցել եմ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերին, մասնակից դարձել դրանցում ներկայացված աուդիտի հաշվետվությունների քննարկումներին, ինչպես նաև նիստերի ընթացքում բարձրացված՝ ինձ ուղղված հարցադրումներին տվել ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:
6. Համապատասխան հանձնարականների համաձայն կազմել և շրջանառել եմ ներքին աուդիտի առաջադրանքների և դրա արդյունքների վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի

հրամանի նախագծեր, ինչպես նաև համապատասխան պետական մարմիններին և նախարարությանն համակարգի աուդիտի միավորներին ուղղված գրություններ, փաստաթղթավորելով դրանք:

7. Կազմել և շրջանառել եմ պետական մարմիններից և նախարարության համակարգի կազմակերպություններից և այլ անձանցից նախարարությանն ուղղված՝ ներքին աուդիտին առնչվող գրությունների մասնագիտական պատասխաններ:

8. Նախարարության կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով ընդգրկվել եմ պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված մասնագիտական խումբի (պատասխանատու ստորաբաժանման), ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կազմերում, կատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համար նախատեսված գործառույթները:

9. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով, կազմել եմ ներքին աուդիտի ծառայությունների տեխնիկական առաջադրանքի և գնման հայտի նախագծերը:

10. Նախարարության ներքին աուդիտի 2024-26 թթ. ռազմավարական և 2024 թ. տարեկան ծրագրերի կազմման նպատակով, ներքին աուդիտի ենթակա՝ նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից, համակարգի կոմիտեներից, կազմակերպություններից (ՓԲԸ-ներ, ՊՈԱԿ-ները) հիմնադրամներից, ԾԻԳ-ից հավաքագրել եմ ռիսկերի տեղեկագրերը և դրանք փոխանցել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ին:

«Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ի պատասխանատուների հետ մասնակցել եմ վերոնշյալ ծրագրերի նախագծերի մշակման և կազմման նպատակով ներկայացված ռիսկերի գնահատման վերլուծելության և գնահատման աշխատանքներին, վերջինիս փոխանցելով միավորների նախանշման, ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ ՀՀ ԿԳՄՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից մատնանշված խնդիրները, դիրքորոշումներն ու գերակայությունները:

Նախարարության ներքին աուդիտի կոմիտեում քննարկման արդյունքներով այդ ծրագրերը հաստատվել են ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ին ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, վավերացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

11. ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հանձնարարականով, ընդգրկվել եմ նախարարության ենթակայության կազմակերպություններում ուսումնասիրություններ կատարող աշխատանքային խմբերում, կատարել եմ պետական բյուջեի ծրագրերի միջոցառումների շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության համակարգի կազմակերպությունների ծախսերի և եկամուտների վերաբերյալ վերլուծություններ ու ուսումնասիրություններ, ներկայացրել եմ առաջարկություններ:

12. Կատարել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի և ֆինանսաբյուջետային վարչության պետի այլ հանձնարարականները:

ՌԱԶՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ